

“CETI Lab: HAYP at BAO”

Արվեստագետների Բնակություն, Ցուցահանդես և Միջոցառումների Շաբաթ
Բյուրականի Աստղադիտարանում և Հերոնու Ռադիո-Օպտիկ Դիտակի մոտ, Հայաստանում

Սեպտեմբեր 16-27, 2017

Բացում օրը՝ Սեպտեմբերի 16-ը, ժամը 14:00-20:00

Կազմակերպված ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահի կողմից

www.haypopup.com

info.hayp@gmail.com


ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 28/08/2017.

ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահը պատիվ ունի ներկայացնելու «CETI Լաբ՝ ՀԱՅՓ ԲԱ-ում», նախագիծը, որը միավորում է արվեստագետների բնակություն, կոլեկտիվ ցուցահանդես և միջոցառումների շարք: Սա կլինի ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահի 10-րդ հավաքական արվեստի ցուցադրությունը Հայաստանում և առաջինը, որը տեղի կունենա Բյուրականի Աստղադիտարանում:

Ցուցահանդեսի մասին.

<<CETI Լաբ. ՀԱՅՓ-ը ԲԱ-ում>>-ն արվեստագետների կեցավայր, ցուցահանդես և միջոցառումների շաբաթ է, որը նախագծել և համակարգում է ՀԱՅՓ շրջիկ պատկերասրահը: Վերջինս հրավիրել է արվեստագետների և գիտնականների երևակայելու ոչ երկրկային բանականության հետ հաղորդակցությունը: Մի խումբ տարբեր արվեստագետներ, այդ թվում՝ լուսանկարիչներ, ճարտարապետներ, քանդակագործներ, գրողներ, ինչպես նաև ծայնային և ինստալացիոն արվեստագետներ, 2017թ.-ի սեպտեմբերի 16-ից 27-ը Հայաստանում Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանը կփոխակերպեն այդ տեղանքին հարմարեցված ինստալացիայի:

Նախագծի ոգեշնչման աղբյուրը Կարլ Սագանի և Իոսիֆ Շկլովսկու կողմից 1971թ.-ին Բյուրականի աստղադիտարանում կազմակերպված CETI խորհրդաժողովն է: Այն համախմբել էր նոբելյան մրցանակակիր գիտնականների՝ ուսումնասիրելու մեր մոլորակի սահմաններից դուրս բանական կյանքի հետ հաղորդակցման հնարավորությունները: Այնպես ինչպես գիտնականներն էին ժամանակին արել, արվեստագետները ևս հաշվի են առնում տարբեր չբացահայտված գործոններ, որոնք ամփոփում են հաղորդակցման մարտահրավերները: Դրանք ներառում են լեզվական, փոխանցման, ընկալման և փոխազդեցության հետ կապված տեխնիկական խնդիրներ, ինչպես նաև ազատ կամքի, ընկալման և հաջող հաղորդակցության հետևանքների շուրջ փիլիսոփայական խոհեր: Քանի որ մենք ունենք <<այլ>>-ի ընկալման մեր մոտեցումը և արդյունավետ փոխանակման համար նախատեսված չափորոշիչները, ապա առավել ակնհատ է դառնում, որ մեծագույն մարտահրավերը այս փոխազդեցություններն իրենց մեջ ամփոփած միջավայրի ընկալումն է:



CETI Lab-ի նախագծերը, Բյուրականի աստղադիտարանի յուրօրինակ միջավայրի, դրա կյանքի ձևերի, գաղափարների և յուրահատկությունների շուրջ, ուսումնասիրություններ ու բացահայտումներ են :

ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

- Թինա Չակարյան, Վիզուալ Արտիստ (Բոստոն, ԱՄՆ)
- Սոնա Մանուկյան, Լուսանկարիչ և Ճարտարապետ (Երևան, Հայաստան)
- Լուիս Մեհիա, Ձայնային Արտիստ (Բեռլին, Գերմանիա)
- Կարեն Միրզոյան, Լուսանկարիչ (Երևան, Հայաստան)
- Սամվել Սաղաթեյան, Նկարիչ և Ճարտարապետ (Երևան, Հայաստան)
- Մանան Թորոսյան, Քանդակագործ և Վիզուալ Արտիստ (Երևան, Հայաստան)
- Գորոդ Օստինով, Արվեստագետների Հավաքական (Իժմեվսկ, Ռուսաստան)
- Արթո Վալն, բանաստեղծ (Բոստոն, ԱՄՆ)
- Վարդան “ՎՀՍաունդ” (VHSound), Ձայնային Արտիստ (Երևան, Հայաստան)

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ ՎԱՅՐԵՐ

Հերոնի ռադիո-օպտիկական աստղադիտակ. Օրգով, Հայաստան

<<Չուսումնասիրողին ոչ հասու>> Լվիս Մեհյա
Տեղանքին հարմարեցված ինստալացիա և ակուստիկ արձագանքման վրա հիմնված խորունկ (contemplative) ձայն

<<Հաղորդակցման մեքենան>> Վարդան “ՎՀՍաունդ” (VHSound)
Ինտերակտիվ գործիք և Բյուրականի աստղադիտարանի ձայնային տիեզերքում հանրային ներկայացում


Բյուրականի աստղադիտարան, Բյուրական, Հայաստան

<<Բազմերանգ ազդանշաններ>> Թինա Չակարյան
Կինետիկ/Շարժական/Առաձգական ակրիլային բազմանկյուն

<<Նրանք շնչում են >> Սոնա Մանուկյան
Արտացոլանքային հաղորդակցման թեմայով տեղանքին հարմարեցված ինստալացիա

<<Միջգալակտիկական պատերազմների շարք>> Կարեն Միրզոյան
Մանկական երևակայության միջոցով հաղորդակցման հետվանքների հետազոտություն. գիտաֆանտաստիկ պատմություններ


<<Կապ>> Գորոդ Օստինով
Ինտերակտիվ Ինստալացիա և այլնլորակայիններին հետևելու հավաքական սարքավորում



<<Հոնոհաղորդակցություն>> Սամվել Սաղաթեյան
Տեղանքին հարմարեցված ինստալացիա և հաղորդակցության հանդիպման վայրի
ուսումնասիրություն #Անցք

<<Սկիզբը եւ վերջը>>, Մանան Թորոսյան
Բաց երկնքի տակ ժամանակի բնույթի և տիեզերքում կյանքի զուգահեռ ձևերի
թեմայով արձան:

Լոյսի Օրինազանցութիւնը Բանաստեղծություն Արթուր Վալերի կողմից



ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ցուցահանդեսի Օրերը և Աշխատանքային Ժամերը

Ցուցահանդեսը բաց կլինի հանրությանը ամեն օր սկսած Շաբաթ, Սեպտեմբեր 16-ից, 2017 թ. մինչև Չորեքշաբթի, Սեպտեմբեր 27-ը, 2017 թ., որոշակի աշխատանքային ժամերի:

- Տեղ 1՝ Բյուրականի Աստղադիտարան, գյուղ Բյուրական, Հայաստան: Աշխատանքային ժամեր՝ բաց է ամեն օր Երկ-Ուրբ ժամը 16:00-ից մինչև 20:00: Շաբաթ և Կիրակի օրերին՝ 12:00-ից մինչև 20:00:
- Տեղ 2՝ Հերոնու Ռադիո-Օպտիկ Դիտակ, գյուղ Օրգով, Հայաստան: Աշխատանքային ժամեր՝ բաց է ամեն օր Երկ-Ուրբ ժամը 16:00-ից մինչև 19:00: Շաբաթ և Կիրակի օրերին՝ 12:00-ից մինչև 19:00:

2. Փոխադրություն՝

Շաբաթ և կիրակի օրերին ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահը կազմակերպում է Երևանից և հետ փոխադրությունը (նստատեղերը սահմանափակ են): Ավտոբուսը ուղևորվորվելու է Հանրապետության Հրապարակից հետևյալ ժամերին՝


	ԹԻՎ 1	ԹԻՎ 2
Երևան → Օրգով → Բյուրական	13:00	15:00
Բյուրական → Երևան	20:00	20:00

Այլ օրերի համար մենք խրախուսում ենք մեր հյուրերին պատվիրել տաքսի (մեկ ուղղությամբ ուղևորությունը պետք է արժենա մոտ 4,000 դրամ):

3. Տոմսեր՝

Բյուրականի Աստղադիտարանի և Հերոնու Ռադիո-Օպտիկ Դիտակի տարածքներում ցուցահանդեսների գոտի մուտք գործելու համար պահանջվում է տոմս: Տոմսն անվճար է և հասանելի է [EventBrite կայքում](#), [հետևյալ հղումով](#)՝

**Քանի որ վերջիններս գործող գիտական ինստիտուտների կենտրոններ են, անվտանգության անցակետում տոմսերը ստուգվելու են: Չմոռանալ՝*



EVENT WEEK

ԲԱՑՄԱՆ ՕՐԸ: Սեպտեմբերի 16-ը

14:00, Լուիս Մեհիայի ինստալյացիայի բացումը և ՎՀՍաունդ-ի պերֆորմանսը
Վայր՝ **Հերոնու դիտակ**, գյուղ Օրգով
16:00, Ցուցահանդեսի բացումը Բյուրականի Աստղադիտարանում (ԲԱ)
Վայր՝ Բյուրականի Աստղադիտարան, գյուղ Բյուրական
17:00, ԲԱ-ի պատմությունը և տուր
Վայր՝ Բյուրականի Աստղադիտարան
18:30, Սամվել Սաղաթեյանի և ՎՀՍաունդ-ի պերֆորմանսներ
Վայր՝ Բյուրականի Աստղադիտարան

Նրանք, ովքեր ցանկանում են ավելի երկար մնալ ԲԱ-ում, կարող են գիշերը գրանցվել աստղադիտմանը: Գրանցվելու համար զանգահարել Գաբրիելին, 091-195-903 (տոմսի արժեքը՝ 1000 դրամ):

Կիրակի, Սեպտեմբեր 17`

«Ամենգիահի Մարդաբանություն» Լուիս Մեհիայի դեբյուտային ալբոմը, 17:00–19:00
Ռինկնդրելու սեսիա և զրույց Բեռլինում բնակվող ձայնային արտիստի հետ, մարդաբանների և արվեստաբանների հետ երկխոսությամբ՝ «մեր միջավայրի հիշողության և ինչպես քննադատորեն մասնակցել մեր այժմեան անցյալով»-ի մասին:
Վայր՝ **Հերոնու դիտակ**, գյուղ Օրգով

Շաբաթ, Սեպտեմբեր 23`


Ցուցահանդեսի պտույտները, 12:00. 15:00. 17:00:
Նախապես գրանցվել Հասմիկ Բադոյանի մոտ (զանգահարել՝ 043220433)
Վայր՝ **Բյուրականի Աստղադիտարան, գյուղ Բյուրական**

Հանդիպում և Վորքշոփ Գոռոգ Ռեստինովի հետ՝ 17:00:
Հանդիպեք այս այցելող արվեստագետների հավաքականին Իժևայից (Ռուսաստան)՝ ցամաքային միկրո արվեստին և Բյուրականի նրանց ինտերակտիվ քարտեզին ծանոթանալու համար:
Վայր՝ **Բյուրականի Աստղադիտարան, գյուղ Բյուրական**

Կիրակի, Սեպտեմբեր 24

Ցուցահանդեսի պտույտները, 12:00. 15:00. 17:00:
Նախապես գրանցվել Հասմիկ Բադոյանի մոտ (զանգահարել՝ 043220433)
Վայր՝ **Բյուրականի Աստղադիտարան, գյուղ Բյուրական**

Ջեն Սեսիա դիտակի մոտ՝ 19:00–20:00



19:00 Ինստիտուտի Վեներաբիլ Գերֆորմանս, կատարմամբ՝ Լուիս Մեիլա,
Վարդան ՎՀՍաունդ, ՀԵՎԻ ՇԵՓՀԵՐԴ և այլոք:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՓ Փոփ Ափ Պատկերասրահը Հասարակական Կազմակերպություն է՝ հիմնադրված Երևանում, Հայաստան: 2014 թվականից ՀԱՅՓ-ը կազմակերպել է 9 ցուցահանդեսներ և 60-ից ավել միջոցառումներ Հայաստանում: 2017 թվականին ՀԱՅՓ-ը ինստալյացիա է համադրել է Վենետիկի Արտ Բիենալեում: Որպես Փոփ Ափ պատկերասրահ, ՀԱՅՓ-ը միտված է հնարավորություն ընձեռնել նոր երիտասարդ արվեստագետներին և ներկայացնել ժամանակակից արվեստը ավելի բազմազան լսարանի՝ այն ավանդական թանգարանային տարածքից դուրս բերելով և դեպի հանրային ոլորտ ուղղելով:

www.haypopup.com



POP UP GALLERY

CHECK OUT THE HYPE.

Կոնտակտ՝

Հայեցակարգի հեղինակ և համադրող՝ Աննա Կ. Գարգարյան
Համադրողի օգնական և բնակության համակարգող՝ Հասմիկ Բադոյան
Հաղորդակցության գծով համակարգող՝ Շարլոթ Պուլեին


info.hayp@gmail.com

www.haypopup.com

Հեռ.՝ +374 (0)99741626/(0)77177452

Հետևեք մեզ սոցիալական կայքերում

Հովանավորներ եւ գործընկերներ՝



BYURAKAN ASTROPHYSICAL OBSERVATORY
Scientific Tourism Centre



audio-technica

